

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷՄՄԱ ԳԱԳԻԿԻ ՆԻԿՈՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Ժ.01.02 «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մարտին Գարեգինի Գիլավյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մամվել Պարզևի Մուրադյան

Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Լուսինե Ռազմիկի
Ներսիսյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան
պետական մանկավարժական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. ապրիլի 29-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ
ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի հայ
և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում
(հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ա.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մարտի 29-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
Բանասիրական գիտությունների
թեկնածու

Ս.Ա.Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1950-ական թվականների կեսերին, պայմանավորված հասարակական-քաղաքական մթնոլորտի առողջացման միտումներով, գրական-գեղարվեստական զարգացումները մտան նոր հուն, սկսվեց առաջընթացի նոր շրջափուլ:

Գրողների ստեղծագործական որոնումները, որոնք միտված էին դեպի գրականության տեսադաշտի ընդլայնում, անցյալի թեմատիկ ու գաղափարական սահմանափակումների հաղթահարում, պսակվեցին արգասավորությամբ: Բացվեց ավագ սերնդի ներկայացուցիչների «երկրորդ շնչառությունը», ասպարեզ եկան նոր ու կարող ուժեր՝ աշխարհընկալման նոր եղանակներով ու մոտեցումներով, մարդու, ժամանակի, բարոյահոգեբանական արժեհամակարգերի վերաբերյալ իրենց յուրահատուկ պատկերացումներով: Արգասավորությամբ պսակվեցին նաև 40-ականների սերնդի որոնումները:

Այդ սերնդի ճանաչված ներկայացուցիչներից մեկի՝ Սուրեն Այվազյանի ստեղծագործությունը ցայսօր չի արժանացել համապատասխան ուշադրության, այն դեպքում, երբ նրա վեպերից ու վիպակներից շատերը, հատկապես՝ պատմվածքները, խոհափիլիսոփայական ու քնարական մանրաքանդակներն իրենց հետաքրքիր հարցադրումներով, կերպարաստեղծման ու պատկերավորման յուրահատկություններով, ինքնատիպությամբ, հուզական լիցքավորումներով ու լեզվառճական մի շարք յուրահատկություններով այսօր էլ, անշուշտ, հետաքրքիր կարող են լինել ընթերցողի համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան գրողի պատմվածքների ժողովածուներն են, որտեղ ներկայացված ստեղծագործություններից շատերը՝ հատկապես «Խիդը» ժողովածուի մեջ ընդգրկվածները, կարելի է արժևորել ամենաբարձր չափանիշներով, արձակ բանաստեղծություններն ու քնարական մանրաքանդակները, որոնք հմայիչ են իրենց բազմերանգությամբ ու հուզականությամբ, վիպակներն ու վեպերը, որոնք ունեն տարածաժամանակային լայն ընդգրկումներ, արդիական հարցադրումներ:

Ուսումնասիրության նպատակն է գրականագիտական մտքի արդի պահանջների համապատկերում ներկայացնել Ս.Այվազյանի գրական ժառանգությունն ու ենթարկել համակարգված քննության, ցույց տալ նրա ստեղծագործական ուղու մակընթացություններն ու տեղատվությունները, խնդիրներն են՝ ամբողջացնել գրողի գրական դիմապատկերը, ցույց տալ նրա տեղն ու դերը ժամանակի գրական շարժման ընդհանուր շղթայում:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մոռացության մատնված կամ թռուցիկ կերպով ուսումնասիրված գրողների ստեղծագործությունների արժևորման անհրաժեշտությամբ:

Ս.Այվազյանի ստեղծագործությունների համակարգված ուսումնասիրությունն, անկասկած, խորապես կընդլայնի նորագույն շրջանի գրականության վերաբերյալ մեր պատկերացումներն ու իմացության շրջանակները, կամբողջացնի գրապատմական ժամանակաշրջանի գրական-գեղավեստական զարգացումների համապատկերը, նախադեպ կհանդիսանա մոռացությունից փրկելու մեր մի շարք արժանավոր գրողների:

Աշխատանքը կարող է օգտակար լինել նորագույն շրջանի արձակի ուսումնասիրողների, ինչպես նաև բուհական հատուկ դասընթացների կազմակերպման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքում օգտագործվել են հայ և այլազգի ճանաչված տեսաբանների ուսումնասիրությունների հիմնադրույթները (Էդ.Զրբաշյան, Ս.Աղաբաբյան, Հր.Թամրազյան, Լ.Հախվերդյան, Ս.Արզումանյան, Ս.Սարիսյան, Վ.Պետրով, Վ.Օսկոցկի և այլք): Կիրառվել են պատմահամեմատական, տիպաբանական, ժամանակագրական-կենսագրական և գրական երկի քննության համակարգային ու ամբողջական վերլուծության սկզբունքները:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ս.Այվազյանի առանձին գործերի վերաբերյալ գրվել են հոդվածներ, գրախոսություններ, գրապատմական շրջանն ակնարկային ձևով ներկայացնելու համար հիշատակվել է նաև նրա անունը, ինչը, սակայն, բավարար չէ գրական հարուստ ժառանգություն ունեցող գրողին պատշաճ կերպով ներկայացնելու համար:

«Մուրեն Այվազյանի գեղարվեստական արձակը» ուսումնասիրությունն այդ բացը լրացնելու առաջին փորձն է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նորագույն գրականության բաժնում և Երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Աշխատանքի հիմնադրույթներն ու եզրահանգումները արտացոլված են ԲՈՀ-ի կողմից ճանաչված ամսագրերում տպագրված հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ տրվում է հարցի պատմությունը, ուսումնասիրության առարկան, մեթոդաբանությունը, նպատակներն ու խնդիրները, գիտական նորությունը, գործնական նշանակությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ

Ս.Այվազյանի գրական հարուստ ժառանգության մեջ առանձնակի տեղ են գրավում փոքր կտավի ստեղծագործությունները՝ պատմվածքները, նովելներն ու քնարական մանրաքանդակները, որոնք ուշագրավ են ոչ միայն բնաշխարհի կոլորիտային պատկերներով, լեռնաշխարհի մարդկանց յուրահատուկ կերպարներով, այլև գաղափարական հարցադրումներով: Այդ ստեղծագործություններում «գրողին մասնավորապես զբաղեցնում է սիրո և ընտանիքի պրոբլեմը: Ներկայացնելով դեռ նահապետական որոշ ըմբռումներից չազատագրված մարդկանց հոգեկան աշխարհը, ցուցադրելով գերազանցորեն սիրո մեջ ձախողակ հերոսների՝ Ս.Այվազյանն արծարծում է զգացմունքի ազատության հարցը, դրան տալով գեղարվեստական յուրովի լուծում»¹:

Ս.Այվազյանի պատմվածքների ժողովածուները ընդգրկում են տարբեր շարքեր, որոնց մեջ զետեղված են նյութով ու տրամադրությամբ հարազատ, իրար հետ փոխկապակցված գործեր: Այս եղանակով հեղինակն ընդգծում է յուրաքանչյուր շարքի նյութի որակական միատեսակությունը: «Ձորերի ձայնը», «Հանդիպումներ ճանապարհին», «Գարունս ձյուների տակ», «Նավթաշխարհում», «Ձայներ Խնձորեսկի ձորերից», «Պանթեոն» և այլ շարքերում խմբավորված պատմվածքներն արտացոլվում են տարբեր ժամանակաշրջանների իրադարձությունները, լեռնաշխարհի կյանքում կատարված փոփոխությունները, աշխարհընկալման մոտ սկզբունքներով մարդկանց կյանքի առանձին դրվագները: Եվ սխալված չենք լինի, էթե ասենք, որ այդ ճանապարհով հեղինակին հաջողվեց, իհարկե, ոչ լիովին, հաղթահարել նախորդ տասնամյակի պատմվածքի նկարագրականությունն ու պատմողականությունը՝ հասնելով հոգեբանական պատումի նոր որակների:

Նրա պատմվածքների «Խիղճը» ժողովածուն լույս տեսավ «Ձնհալի» առաջին տարիներին, երբ գրողները փորձում էին հաղթահարել անհատի պաշտամունքի ժամանակների գաղափարախոսական ու թեմատիկ կաշկանդումները, գրականության զարգացումը մղել առաջընթացի նոր հուն, գրականություն բերել բնական մարդուն, բացահայտել անհատի հոգսերն ու մտահոգությունները, նրա ներաշխարհի թաքնված շերտերը:

¹ Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, հ. 2, Երևան, ԳԱԱ հրատարակչություն, 1965, էջ 436:

Գրողի ուշադրությունն այս ժողովածուի շարքերում սևեղծած է բարոյահոգեբանական խնդիրների վրա, որոնք ներկայացվում են հիմնականում գյուղական կյանքի ու կենցաղի լայն համապատկերում:

Ս.Այվազյանն ավելի շատ հակված է դեպի քնարական արձակք, որը պահանջում է նյութի դիմադրությունը հաղթահարելու այլ մոտեցումներ, կերպարակերտման ու պատկերաստեղծման այլ եղանակներ ու ձևեր:

«Խիղճը» ժողովածուի քնարական պատմվածքները, որոնք արտահայտում են հերոսների ներաշխարհի ոչ միայն հուզական դրսևորումները, այլև նրանց իրական հարաբերությունները, կենսակերպի յուրահատկությունները, նյութի ճանաչման ու նրա դիմադրության հաղթահարման եղանակով որոշակիորեն տարբերվում են սերնդի մյուս արձակագիրների ստեղծագործություններից:

Այդ պատմվածքների քնարականությունն արտահայտում է աշխարհավերաբերմունքային լայն ու խոր բովանդակություն և հուզական թրթիռներ ու լիցքեր է հաղորդում պատումի ընթացքին: Այստեղ է, որ գրողը շարունակում է «հայրենի հողի ավիշներով և ժողովրդական զգացմունքներով սնվող բակունցյան արձակի»² ավանդույթները:

Նրա փոքր կտավի ստեղծագործությունները գեղարվեստական ուշագրավ պատումներ են լեռնաշխարհի կյանքի բարդ ընթացքի, խորաձորցիների ավանդական սովորությունների, կորուստների և ուրախությունների, հաջողությունների, հույսերի ու մտահոգությունների վերաբերյալ: Դրանց հերոսներն անցումային ժամանակների քաղաքական ու հասարակական կյանքի խառնակ իրավիճակներին հատուկ միջավայրում հայտնված մարդիկ են, ովքեր ցանկանում են անաղարտ պահել բնական մարդու, տոհմիկ լեռնեցու իրենց նկարագիրը: Նրանցից շատերը երբեք չեն մոռանում անցյալի խորունկ վերքերը. ոչ մի ուրախություն կամ հաջողություն ի գորու չէ բուժելու դրանք... Բայց կյանքը շարունակվում է, և ապրել է պետք, Շափաղաթ ապրո նման առաջ նայել է պետք՝ հանուն ներկայի ու ապագայի:

Գրողը հոգեբանի նուրբ զգացողությամբ է պեղում իր փոքր կտավի հերոսների ներաշխարհը, բացում բազմաշերտ ծալքեր: Այդ հերոսներից շատերը ծայրաստիճան աղքատության մեջ ապրող մարդիկ են, և ինչքան մեծ էր դարասկզբի հեղաբեկումների հետ կապված հավատը, ինչքան հուսատու էին նորը հաստատող խոստումները, այնքան ավելի խոր եղավ հուսախաբությունը, որ անդառնալի ավերածություններ գործեց մարդկանց հոգիներում:

Ուշադրություն դարձնենք «Խիղճը» ժողովածուի ժամանակային և տարածական ընդգրկումների շրջանակներին: Գործողությունները հիմնականում ծավալվում են Խորաձորում, որը պատմական Խնձորեսկն է, կոլեկտիվացման, քաղաքացիական կռիվների, Հայրենական մեծ պատերազմի, 60-ականների «գիտատեխնիկական առաջընթացի» տարիներին:

² Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, ԳԱՍ հրատ., Երևան, 1986, էջ 462:

Ժամանակները տարբեր են, բայց համարյա նույն են մնացել մարդկային հոգսերն ու մտահոգությունները, կենցաղն ու հոգեբանությունը, նահապետական անցյալի սովորություններն ու բարքերը, որոնք ծնունդ են տալիս ծանր ապրումների, խեղում ճակատագրեր, հոգեպես հաշմում մարդկանց: Անցյալի հուշերով ու առօրյա հոգսերին դիմակայելու, լավ օրերի սպասումների հոգսերով են ապրում խորաձորցիք:

Ինչե՛ր ասես, որ չի հիշեցնում գյուղից վեր մեծ ճանապարհի վրա խշշացող ընկուզենին. «Հին է այն ընկուզենին, որ խշշում է գյուղից վեր մեծ ճանապարհի վրա, ու խշշոցը գիշերվա լռության մեջ հոսող ավազի պես իջնում է ձորը, մտնում տները: Եվ ինչե՛ր է հիշեցնում այդ խշշոցը... Ինչպիսի՞ պատմություններ մեռած-գնացած խնձորեսկցիների մասին, որ խշշոցի պես սկիզբ են առել հինավուրց ընկուզենու տակից, տարածվել գյուղում, ապա ուրիշ տեղեր»³ («Փրթոսի ընկուզենին»):

Ընկուզենու ստվերում են հավաքվում գյուղի ծերերը, և հիշողությունները նրանց տանում են դեպի հեռավոր ժամանակներ. «Ահա ուշ աշուն է: Արևը նարնջի պես դեղնել է, խոտերն էլ են դեղնել...Թեթև, անընդմեջ քամուց սվսվում են դեղին, տամուկ խոտերը, իսկ ընկուզենին խշշում է, հառաչում հսկայի պես: Բարձր սալաքարի վրա նստել է Ունանանց բրուտ Ունանը, բան է պատմում՝ կրծքի վրա մորուքի սպիտակ, մեծ մալանչը, հողագույն ձեռքը վրան»⁴:

Ժողովրդական իմաստնության, խորիմաստ փիլիսոփայության խորհրդանիշն է Ունանանց բրուտ Ունանը, որ նստում է Փրթոսի ընկուզենու տակ՝ սալ քարին, «դանդաղ չրխկացնում թագրեհի հատիկները» ու բացում հինավուրց պատմությունների ու հուշերի կծիկը, պատմում մարդկանց բարի ու չար արարքների մասին և իր պատմությունները միշտ ավարտում «չարը ծնվում է՝ երկար չի ապրում: Չարն անիծված է» խոսքերով:

Առօրյա հոգսերի ծանր բեռի տակ կքված մարդիկ հպարտ են իրենց գյուղի պատմությամբ, քաջ ու անվեհեր հայրենակիցներով, ովքեր փառքով են պսակել իրենց անունը առաջին աշխարհամարտի ու մեծ Հայրենականի տարիներին: Ահա ծերությունից կուրացած Խաչի ապերը, ում միակ որդին՝ Արմենակը, սպանվեց հոր աչքի առջև, Սահականց Բարխուդարը, ով չորս որդիներին պատերազմ է ուղարկում՝ պատգամելով «Վա՛յ ձեզ, թե խնձորեսկցու անունը ոտնատակ տաք», թոփչի Խաչանը, ով պատերազմի լուրը լսելուն պես հագնում է սնդուկում խնամքով պահված ցարական բանակի ֆեդիֆեբերի հագուստը, կրծքին կախում Գևորգյան երեք խաչերն ու ներկայանում զինկոմիսարիատ. «Ռազմական դրություն է, տանը նստելով հաղթանակ չի լինի, մարտական առաջադրանք տվեք ինձ»:

Քնարական միջամտություններով Ս.Այվազյանն արծարծում է մարդ-բնություն, մարդ-հասարակություն, մարդ-ժամանակ կապերը, անցավորի ու հավերժականի վերաբերյալ իր հերոսների մտասնեռումները:

³ Այվազյան Ս., Խիդճը, Երևան, 1957, էջ 18:

⁴ Նույն տեղում, էջ 19:

Հավերժ նորոգվող բնության խորհրդանիշն է ընկուզենին՝ մեկն այն շիվերից, որ անհիշելի ժամանակներում տնկել է Փրթոսը ու «խնդրել շենացիներին, որ նրանց մոտով անցնելիս մի բուռ ջուր ածեն տակը, մինչև արմատները կապվեն հողին: Սովորությունը մնում է մինչև հիմա», և հիմա էլ նրա սովորում հավաքված մարդիկ «հողե կժերից ջուր են խմում, խմելուց առաջ ամեն մեկը մի բուռ ջուր է լցնում ծառի տակ»:

Ս.Այվազյանի «Խիղճը» ժողովածուի պատմվածքների հերոսներն ապրում են լեռնեցիներին հատուկ արժանապատիվ համեստությամբ՝ քախոս են, յուրաքանչյուրն իր գործին, իր հոգսերի, մտահոգությունների, իր հուշերի հետ: Նրանցից մեկն է Լուռ Լալազարը՝ համանուն պատմվածքի հերոսը, ով այնքան «սակավախոս էր, որ ամբողջ օրը կարող էր լինել մարդկանց մեջ ու ոչ մի բառ չասել»:

Առաջին համաշխարհայինից նա իր հետ մի կաթսայիկ ու մի տափաշիչ էր բերել՝ ի հիշատակ մարտում զոհված ընկերոջ: Հետո, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Լալազարը կամավոր մեկնեց ռազմաճակատ, ու ոչ ոք նրա մասին այլևս ոչինչ չիմացավ: Ինչպես մեկնել, այնպես էլ անսպասելիորեն մի օր հայտնվում է Լալազարը գյուղում: Պատերազմից վերադարձողները հետաքրքիր պատմություններ են պատմում, շատերը խոսում էին իրենց հերոսությունների մասին, իսկ Լալազարը լուռ էր. «Լալազարը մի աչքի մեջ թախիժ, մյուսի մեջ ցատում՝ լսում էր ուրիշների պատմածները: Եվ երբ նրան խնդրում էին, որ ինքն էլ մի բան պատմի, շշնջում էր. «Դե, ինչ ասեմ, ասացին էլի, իմ մասին ինչ պատմեմ, կոփվ էր էլի, վերջացրինք, եկանք»⁵:

Լալազարին Խորաձորը միայն նրա հուղարկավորության օրն է ճանաչում. «Այդպիսի հուղարկավորում Խորաձորը չէր տեսել: Դագաղի առջևից տասներկու երիտասարդ կարմիր բարձերի վրա տանում էին հանգուցյալի շքանշաններն ու մեղալները...»⁷:

Լալազարի պես շատերն են Ս.Այվազյանի պատմվածքներում հավատարիմ մնում իրենց բնական վիճակին: Ժողովրդական հոգեբանության խոր իմացությունը, մեծ կենսավորձը հնարավորություն են տալիս հեղինակին «քննախույզ հայացքով մեկնաբանելու բարոյական ըմբռումները՝ պաշտպանելով ժամանակների փորձությանը դիմագրավող մարդկայինը, գեղեցիկը: Սովորությունները ձևավորել ու պարտադրել է կյանքը, և ամեն մի խախտում հղի է ողբերգական հետևանքներով: Որքան էլ որ հասկանալի և ընդունելի է այդ սովորությունների անհրաժեշտությունը, բայց և այնպես կան կենսական իրադրություններ, երբ բացառություն չհանդուրժող նրանց բնույթը տեղի է տալիս ողբերգությունների»⁸:

⁵ Նույն տեղում, էջ 21:

⁶ Այվազյան Ս., Խիղճը, էջ 44:

⁷ Նույն տեղում, էջ 45:

⁸ Աղաջանյան Ս., Հայկական պատմվածքը 1960-1970-ական թվականներին, Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 23:

Ավանդապահ ու ավանդապաշտ մարդիկ են խորհածրոցի՝ խղճի ու պատվի վերաբերյալ դարերով արմատավորված իրենց պատկերացումներով: Մինչև ամուսնանալն աղջիկն իրավունք չունի հանդիպելու որևէ տղամարդու: Ընտրության իրավունք չունի նա ու երբեք չի կարող իր ծնողների կամքին հակառակ սիրել որևէ մեկին: Բայց լինում են դեպքեր, երբ ամեն ինչ այլ կերպ է դասավորվում: Թխկուտի ձորի գարդն է Շուշանը: Դարբին Թևոսի աղջկան շատերն են սիրահարվել: Իր չքնաղ տեսքով, կանացի հմայքներով Շուշանը շատերին է գերել: Բայց միշտ մտայլ ու մտահոգ է նա, ինչ-որ մի ցավ բուն է դրել նրա սրտում ու տանջում, օրեցօր մաշում է նրան. տարիներ առաջ ինչ-որ մեկը խաբել է դեռատի աղջկան, իսկ թե դա ինչ է նշանակում թխկուտցիների պատկերացմամբ, ավելորդ է ասել: Շուշանը ոչ այնքան իր, որքան ծնողների ու հարազատների մասին է մտածում, դարբին հոր, ով գյուղի ամենահարգված մարդկանցից մեկն է, մոր, ով մաքրության ու սրբության խորհրդանիշ է գյուղում, եղբայրների, ովքեր երբեք չէին տանի այդ անպատվությունը:

Լեոնաշխարհում արմատավորված սովորությունները, կնոջ ու տղամարդու հարաբերությունների վերաբերյալ ավանդական պատկերացումները շատ հաճախ դառնում են դժբախտության պատճառ: Նախապաշարումները թույլ չեն տալիս «Բախտը» պատմվածքի հերոսներին՝ Դավիթին ու Շուշանին սիրո խոստովանություն անել միմյանց, բացել իրենց սրտի գաղտնիքները. «Աղջիկն ինչպե՞ս կարող է սիրել. նա պետք է սպասի, որ մեկն իրեն սիրի: Ինքը կսիրի, թե չի սիրի՝ մեկ է...»: Սա է լեոնաշխարհում ընդունված կարգը, որ շատերին խեղում է հոգեպես: Ծանր ողբերգություն են ապրում Շուշանն ու Դավիթը՝ դժբախտացնելով նաև նրանց , ում հետ ամուսնանում են:

Անճանաչելիորեն փոխվում է Դավիթը. «Մեկն ասում էր, թե թաքուն հիվանդություն ուներ, ամուսնությունը շարժել է, մեկն ասում էր՝ դարդն է մաշում... աղջկա պատիվը գողացված է եղել... Իսկ Դավիթը քանի գնում, ավելի է դառնում լռակյաց, աչքերի շուրջը շատանում են մազանման կնճիռները, խորանում է ծոծրակի փոսը, և ավելի է մեծանում աղամախնձորը...»⁹:

Ամբողջ կյանքում իրեն դժբախտ է զգում նաև Շուշանը, ով թեպետ համակերպվում է բախտի հետ, բայց «սրտի խորքում պահում է առաջին սիրո անթեղված կրակը»:

Դժբախտ է նաև Լուսիկը, ով թեպետ ոչ մի «թթու խոսք» չլսեց Դավիթից, բայց նաև չտեսավ նրա սիրո քնքշությունը, Վաչագանը, ով կյանքում չզգաց սիրող կնոջ ջերմությունը:

«Խիղճը» ժողովածուի մի շարք պատմվածքներում («Փակ դարպասի առաջ», «Կինը», «Եվա» և ուրիշներ) Ս.Այվազյանը հոգեբանական նուրբ դիտարկումներով է բացահայտում սիրո մեջ ձախողակ իր հերոսների ծանր ապրումները: Մերժված սիրո, նրա տառապանքների, հոգեկան խռովքների մասին չէ հեղինակի խոսքը, այլ ճակատագրի քմահաճույքների,

⁹ Նույն տեղում, էջ 96:

արմատավորված բարոյական նորմերի պատճառով ակամա դժբախտացած մարդկանց մասին:

Ս.Այվազյանի փոքր արձակի էջերում նախ և առաջ պետք է փնտրել մարդկային իսկական արժեքներ, հոգեբանական նուրբ ներսուզումներ, մարդու ու բնության, անհատի ու հասարակության ներդաշնակություն ու բարդ հարաբերություններ և դրանք արժևորել հեկո այս տեսանկյունից, ինչը գրականագիտական մտքի՝ արժեքների վերագնահատման հիմնական մոտեցումներից մեկն է այսօր:

Բարոյաէթիկական բովանդակություն ունեն նաև «Հերիք», «Եվա», «Կինը», «Հեքիաթ լեռների աղջկա մասին» և մի շարք ուրիշ պատմվածքներ, որոնց թեմատիկ միավորման սկզբունքը նույնպես անհատի ներաշխարհի, ժամանակի և մարդու կապերի բացահայտումներն են: Ժամանակները, ճիշտ է, փոխվում են, բայց մարդիկ դեռևս ապրում են ավանդական սովորույթների ու հավատալիքների ոլորտներում: Յուրովի դժբախտ են Ս.Այվազյանի պատմվածքների հերոսները, յուրաքանչյուրը մի հոգս ունի, մի ցավ, մի կարոտ ու հիշողություն, և համոզիչ չէ քննադատության այն նկատառումը, որ «գրողները, ներկայացնելով «հուզիչ» պատմություններ, հաճախ էլ չարաշահելով զգայացունց դեպքի հուզական շերտը, որ տանում է դեպի «սենտիմենտալիզմ», հաճախ չեն կարողանում գտնել թեմայի սոցիալական նոր բովանդակությունը և սահմանափակվում են կենցաղային նեղ պլանով»¹⁰:

Իր պատմվածքներում գրողն ավանդում է լուսյա խորհուրդը, ընթերցողին տանում մանկության հեռավոր հովիտները, որ լեփ-լեցուն են անկրկնելի գույներով ու շշուկներով՝ հեքիաթային ու դյուբիչ: Տխրություն ու ցավ կա այդ հովիտներում, դառը հուշեր, անմոռանալի պատկերներ, հարազատ մարդիկ, որոնցից շատերն այլևս չկան, բայց յուրաքանչյուրն ինչ-որ մի հետք է թողել իրենից՝ հետո՝ մի հուշարձան-աղբյուր, մի կամուրջ, ճամփեզրին տնկած մի ընկուզենի, մի հետաքրքիր պատմություն, մի կախարդական այգի:

Ս.Այվազյանի փոքր արձակի քնարական երակը լիարյուն կերպով սրովում է նաև «Գարունս ձյունների տակ» (1972) խորագրով ժողովածուում:

Թեմատիկ առումով բազմազան են հեղինակի մանրաքանդակները, որոնք ամփոփված են «Կյանքի հմայքը», «Գարունս ձյունների տակ», «Ինքս ինձ հետ» շարքերում:

Կենսաթրթոթ լիցքերով, վառ ու թանձր գույների վարպետորեն գտնված համադրություններով ու հակադրություններով, անցավորի ու մնայունի վերաբերյալ փիլիսոփայական խորհրդածություններով, առաջին սիրո ջերմ թրթիռներով, հասունության շրջանի զգացմունքների տաք բռնկումներով են լեցուն Ս.Այվազյանի մանրապատումները:

«Գարունս ձյունների տակ» շարքի մանրապատումները քնարական ու խոհափիլիսոփայական խորհրդածություններ են մարդու էության, անհատի

¹⁰ Թամրազյան Հր., «Սովետահայ գրականության պատմություն», Երևան, 1980, էջ 435-436:

ինքնաքննության, գեղեցիկի, բարոյական անանց արժեքների՝ հայրենիքի ու հայրենասիրության, երջանկության, փոխադարձ ու մերժված սիրո, պատվի ու պատվախնդրության վերաբերյալ:

Ազգային արժանապատվության բարձր զգացումներով են տոգորված մայրենի լեզվին, մեր ինքնության վկայագրերին դպրությանն ու երգին, խաչքարերին, ճարտարապետական կառույցներին նվիրված մանրաքանդակները:

Ալեքսանդրիայի արմավենիների մի կանաչ պուրակում՝ Կահիրեի հայոց գերեզմանատանը, հանգչում է Պողոս-Նուբար փաշան. «Աստ հանգչի մարմինը լուսահոգի Յուդաբեր Չմշկյանի, ով գաղթել է Մեքաստիայից՝ գաղթի ճանապարհին թողնելով ութ որդուն՝ հիշատակ միակ որդուց, Արմենակ Եկարյան՝ Վանի ինքնապաշտպանության հերոս... Եվ հետո իրար կողքի Արփիար Արփիարյան, դերասանուհի Սիրանույշ, Երվանդ Օտյան... Հասկանալի է...»

- Բայց մի՞թե հասկանալի է,- ասես բողոքում են բոլոր քարերը:- Հայը կարող է զինվոր լինել, կռվել հայրենիքի համար և ընկնել օտար հողում, ինչպես իսպանացին, ինչպես բուլղարացին, լեհը կամ հույնը: Հայը կարող է տարագիր լինել, ինչպես մարդն ամեն մի փոքրացած ազգի: Բայց կա՞ն թաղված մի այլ ժողովրդի հոգևոր մշակները մի ուրիշ հողում:

- Չկա՞ն,- ասես հողի տակից լսվում է Սիրանույշի ձայնը՝ թրջված արցունքով...¹¹ («Հայոց գերեզմանատունը»):

Գրողի մտասևեռումները պտտվում են երկնայինի ու տիեզերականի ոլորտներում, նա հավիտենության ձայնն է լսում ակնթարթի տրոփյունի մեջ («Ակնթարթի մեջ մահ կա և կյանք. սթափվիր սիրելիս և ըմբռնիր ակնթարթի էությունը»):

Բազմաթիվ «ինչունների» պատասխանն է փորձում գտնել գրողը և ուրախ է, որ չի գտնում, որովհետև կյանքը կղառնա անիմաստ ու անհետաքրքիր. «Փնտրումների մեջ է իմ անդորրը»: Նրա հոգում «աստվածներ են ապրում, և ինքը հարատև ու հաճելի վիճաբանությունների մեջ է նրանց հետ», և «այն աստվածը, որ բացահայտվում է, մեռնում է իմ մեջ»:

Բարությամբ, բացվող առավոտների անխառն լույսով, քնարական ջերմ թրթիռներով են լցված Ս.Այվազյանի պատմվածքներն ու մանրապատումները, որոնք, անկասկած, մեր նորագույն շրջանի արձակի լավագույն էջերից են և գրական վարպետության կատարելագործման հիանալի դպրոց հանդիսացան հեղինակի համար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՎԻՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Տարիների կենսափորձը, աշխատանքը լեռնաշխարհի տարբեր գյուղերում, լրագրողական գործուղումները, շփումները ամենատարբեր բնագավառների մարդկանց հետ օգնեցին կատարելագործելու գրական

¹¹ Այվազյան Ս., «Գարունս ձյուներ տակ», Երևան, 1972, էջ 37:

վարպետությունը, ավելի մոտիկից ու լավ ճանաչելու իր սպագա ստեղծագործությունների հերոսներին, հասկանալու նրանց հոգսերն ու մտահոգությունները, կենցաղը, սովորությունները: Գրողի ուշադրությունը սևեռեց ավելի ընդգրկուն խնդիրների վրա: Ընդլայնվեցին թեմատիկ ընդգրկումների շրջանակները, անհատի ու հասարակության, բնության ու մարդու, ընտանիքի, սիրո, բարոյականության և այլ հարցեր տեղափոխվեցին նոր հարթություններ, մեկնաբանվեցին գրողական այլ մոտեցումներով:

Բնականաբար, Ս.Այվազյանի ոչ բոլոր վիպակներն ու վեպերն են, որ այսօր էլ կարող են հետաքրքիր լինել ընթերցողի համար, ուշադրության արժանանալ հարցադրումների հրատապությամբ, պրոբլեմների սրությամբ, գեղարվեստական յուրահատկություններով ու գրական բարձր վարպետությամբ:

Հատկապես մեծ կտավի առաջին ստեղծագործություններում գրողին ոչ միշտ է հաջողվում կերտել ավարտուն կերպարներ, զգալ հասարակական կյանքում ու հերոսների գործողություններում տեղի ունեցող տեղաշարժերն ու փոփոխությունները, հերոսներին ներկայացնել ոչ թե արհեստականորեն ստեղծված, այլ բնական միջավայրում, տուրք չտալ ժամանակի գաղափարախոսական պարտադրանքին, ներկայացնել հասարակական կյանքի սուր պրոբլեմներն ու արատները: Մակայն գրողի այդ գործերը նույնպես արժանի են ուշադրության՝ մի կողմից հետպատերազմյան առաջին տասնամյակի գրական-գեղարվեստական զարգացումների յուրահատկությունների ճանաչման, մյուս կողմից՝ գրողի ստեղծագործական դինամիկային հետևելու ու նրա գրական դիմանկարի ամբողջացման նկատառումներով:

«Խորաձորցիք» վիպակ նվիրված է Ջանգեզուրում քաղաքացիական կռիվների ժամանակ տեղի ունեցած իրադարձություններին, խորհրդային կարգերի հաստատման համար Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ գործող դաշնակցական զորքերի դեմ «աշխատավոր ժողովրդի մղած հերոսական ու անձնուրաց» պայքարին, հայ և ադրբեջանցի կոմունիստների՝ «այդ պայքարում ավելի ամրապնդված համագործակցությանը»:

1920-ական թվականների քաղաքական զարգացումների համապատկերում գրողը փորձում է ներկայացնել Խորաձորի կոմունիստների իր դրական հերոսների նվիրական պայքարը խորհրդայնացման համար, ժողովրդի ճակատագրի հանդեպ ունեցած նրանց մտահոգություններն ու լուսավոր ապագայի հույսերը, անսահման մարդասիրությունն ու բարոյությունը՝ ի հակադրություն դաշնակ խմբապետների ու նրանց կողմից խաբված որոշ խորաձորցիների դաժանության, որը դրսևորվում է ամենուրեք ու բոլորի նկատմամբ, անգամ ծերունիների ու երեխաների, եթե նրանք բոլշևիկների բարեկամները կամ հարազատներն են, կամ երբևէ առնչվել էին նրանց հետ:

Բնականաբար, այդ տարիներին Ս.Այվազյանը, մեծ ցանկության դեպքում անգամ, չէր կարող ճշմարիտ կերպով ներկայացնել 20-ականների սկզբներին Ջանգեզուրում տեղի ունեցող իրադարձությունները, խորանալ աշխարհաքաղաքական զարգացումների պատճառահետևանքային կապերի

մեջ, Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ բռնկված շարժումը դիտարկել որպես ազգային-ազատագրական պայքար: Այստեղից էլ նրա ընդգծված վերաբերմունքը «հեղափոխության թշնամիների», նրանց վարած քաղաքականության ու գործունեության նկատմամբ:

Վիպակում չկան ավարտուն կերպարներ, չնայած այդտեղ գործող անձանց կարելի է տասնյակներով հաշվել, որոնք հանդես են բերված խիստ բնեռացված կերպով՝ դրականի ու բացասականի տիրույթներում:

Խիստ ընդգծված դրական կերպարներ են որմնադիր Մանասը, ով համոզված է, որ «Լենինը ազատություն է բերում ոչ միայն ռուսների, այլև բոլոր ժողովուրդների համար»¹², կամուրջների նշանավոր վարպետ Ջավադը, Խոսրովը, Բայանդուրը, ջրղացպան Ներսեսը, Մկրտիչը, Արշակը, կուսբջիջի քարտուղար Ղավայանը, հատկապես Նուրեդդինը, ով եկել է Բաքվից՝ հայ եղբայրներին օգնելու, որպեսզի Ջանգեզուրն ազատագրեն դաշնակներից. «Կոփված բոլշևիկ է: Բաքուն նրա մեջ մարմնացրել է այն ամենը, ինչ անհրաժեշտ է իսկական ռոյալիզմներին»¹³, Մայսուրյանը, աշուղ Առաքելը, Մկրտիչը, տասնյակ այլ գործող անձինք, ովքեր հանդես են բերված ոչ բնական հանգամանքներում, գեղարվեստորեն անհամոզիչ կերպով:

Խիստ պաթետիկ ու անհամոզիչ են «կոփված բոլշևիկ» Նուրեդդինի էլույթները հայ և ադրբեջանցի ժողովուրդների «դարավոր բարեկամության ու եղբայրության», միացյալ նոր հայրենիքում երկու ժողովուրդների ավելի սերտ համագործակցության, խորածորցի կուսբջիջի քարտուղար Ղարազյուզյանի «համաշխարհային հեղափոխության, «արտելների» առավելությունների, կուլակաթափության, մասնավոր սեփականության և այլ հարցերի մասին, որոնք պարզապես էջեր են լցնում:

«Խորածորցիք» և «Անշեջ կրակների կղզին» վիպակներով և 50-ականների սկզբներին գրված մի շարք պատմվածքներով ավարտվում է Ս.Այվազյանի ստեղծագործական գործունեության առաջին շրջանը: Սկսվում է նոր շրջափուլ, որը նշանավորվեց 1956 թվականին լույս տեսած «Լեռնցիներ» վեպով:

Ս.Խանազյանի «Հողը» և Քր.Թոփուլյանի «Ոսկե հովիտը» վեպերի հետ միասին «Լեռնցիները» որակվեց որպես հետպատերազմական տարիների գյուղաշխարհի կյանքին նվիրված ուշագրավ ստեղծագործություններից մեկը:

Վեպի գործողությունները տեղի են ունենում հետպատերազմյան առաջին տարիներին. «Պատերազմից հետո առաջին գարունն էր: Վարդաշատի դաշտի հարավային կողմում սևին էր տալիս գարնանացանի առաջին հերկը»¹⁴: Պատերազմից ողջ վերադարձածները լծվել են գյուղական խաղաղ աշխատանքի. «Ճիշտ է, եկողների մեջ կան մի ոտանի, մի թևանի, Թոխասնց Թևոսը գլխից վիրավորվել է, կորցրել է տեսողությունը, բայց վերադարձել է, և գյուղը նորից սկսել է կյանք առնել»: Կուլտնտեսության նախագահ Մելքոնը

¹² Այվազյան Ս., Խորածորցիք, Բաքու, 1951, էջ 8:

¹³ Նույն տեղում, էջ 9:

¹⁴ Այվազյան Ս., Լեռնցիներ, Երևան, 1955, էջ 5:

մատնների վրա հաշվում է հետ վերադարձածներին. զոհվածներն ավելի շատ են, պետք է միխիթարել որդեկորույս մայրերին, մտածել որք երեխաների մասին, ամոքել միայնակ մնացած ծերունիների վշտերը, նեցուկ լինել նրանց:

Վեպն առաջին իսկ հատվածներից աչքի է ընկնում այուժետային գծերի բազմազանությամբ, որտեղ կան և՛ հոգեբանական նուրբ ներթափանցումներ, և՛ հերոսների անհատականության դրսևորումներ, և՛ իրական բախումներ: Հերոսները կոնկրետ իրավիճակներում գործող մարդիկ են՝ պարզ ու անմիջական, իրենց արժանապատվությունը գիտակցող, որդիական անկաշառ սիրով մայրենի հողին կապված:

Պատումի ընթացքում աստիճանաբար ընդգծվում է այուժետային երկու գիծ՝ պատերազմից վերադարձած, գյուղաշխարհի բարեփոխումներով մտահոգ, տնտեսության կառավարման հին մեթոդների հետ չհամակերպվող երիտասարդության և ընտանեկան-կենցաղային հարաբերությունների, սիրո ու խանդի հողի վրա տեղի ունեցող այուժետային զարգացումների գծերը, որոնք միշտ չէ, որ ընթանում են զուգահեռ ու փոխադարձաբար լրացնում միմյանց:

Այուժետային երկու հիմնական գծերից ճյուղավորվում են մի շարք ուրիշ գծեր, որոնցից շատերը, թերևս, ավելորդ են ու ոչինչ չեն ավելացնում հեղինակային հղացումների ընդհանուր տրամաբանությանը:

Օրինակ, հայ և ադրբեջանցի անասնապահների, նրանց փոխհամագործակցության, միմյանց օգնելու, սատար կանգնելու, խոտհարքների, արոտավայրերի համատեղ օգտագործման, Աբուլֆասի և նրա կնոջ՝ Արամի առողջական վիճակով խիստ մտահոգվածության, նրա բուժումը Բաքվում կազմակերպելու պատրաստակամության, հիվանդին այցելության եկած Շահումյանբաղջիների առատաձեռնության, հարևան շրջկոմի քարտուղար Ասլան Կուլիևի՝ հիդրոկայանի կառուցման ժամանակ Մինգչաուրից շինարարական նյութեր ու տեխնիկա բերելու վերաբերյալ պատմությունները խիստ դիպվածային են ու անհամոզիչ, արհեստականորեն ուռճացված, պաթետիկ ու չեն համատեղվում վիպական ընդհանուր շղթայում:

Հասկանալի է, որ հեղինակը, տուրք տալով ժողովուրդների բարեկամության՝ 1950-ականներին լայնորեն շրջանառվող թեմային, խտացնում է գույները, շրջանցում իրողությունները: Իսկ իրողությունն այն է, որ հատկապես ամառային խոտհարքների, անասունները ձմեռանոց տանելու օրերին հաճախակի էին տեղի ունենում ազգամիջյան բախումներ, որոնց վրա կամ աչք էին փակում, կամ քննարկվում կենցաղային դրդապատճառների տիրույթներում: Նույնպիսի բախումներ են լինում ջրային պաշարների, անտառային տարածքների, ընդհանուր մայրուղիների օգտագործման կապակցությամբ:

Պատումի ընդհանուր շղթայում չեն տեղավորվում նաև տարբեր ժողովների, հատկապես՝ հայկական ու ադրբեջանական կոլտնտեսությունների վարչությունների համատեղ նիստերի ձգձգված նկարագրությունները, մի շարք կերպարների՝ Նուրահմեդ Սաֆարալիևի, Հայրապետի կնոջ՝ Վարսենիկի, Ահարոնի մոր՝ Նազանի պաթետիկ ելույթները,

Արտակի ամուսնությունը ադրբեջանուհու հետ, Սադըիի աշակերտությունը ուստա Մանուչարի մոտ, Արտակի ու Գյուլնարայի համատեղ որսորդությունը:

Վեպի սյուժետային զարգացումների հիմնական գիծը Արամի ու Հայկանուշի հարաբերություններն են, որոնք ներկայացված են գեղարվեստական համոզիչ դրսևորումներով: Գրողը ներկայացնում է սիրային մի դրամատիկ պատմություն, որի բազմաճյուղ զարգացումները ծավալվում են տարբեր հարթություններում, իրենց մեջ ներառում նոր կերպարներ:

Սյուժետային այս գիծը, ի տարբերություն կոլտնտեսային կյանքն ու ժողովուրդների բարեկամությունը ներկայացնող գծի, աչքի է ընկնում կոմպոզիցիոն ամբողջականությամբ. բոլոր մասերը թեմայի զարգացման տրամաբանությամբ իրար հետ շաղկապված են ներքին կապերով:

Արամի ու Հայկանուշի կերպարները Ս.Այվազյանը ներկայացնում է նրանց ապրումների, հոգեվիճակների բնութագրությամբ:

Հեղինակը գեղարվեստորեն համոզիչ կերպով է ներկայացնում Արամի ու Հայկանուշի լարված հարաբերությունների հանգուցալուծումը: Ժամանակի ընթացքում ամեն ինչ պարզվում է, բացահայտվում է բամբասագրի ով լինելը. «Հայկանուշի և Արամի հաշտության լուրը արագ տարածվեց... Բոլորի համար էլ այդ դեպքը րախսալի էր... Արամի սիրտը նորից թրթռաց հուզմունքից: Նրա համար ամուսնության առաջին օրերի պես հաճելի էր դարձել տունը»¹⁵:

Ս.Այվազյանի բուն նպատակն, անշուշտ, Արամի և Հայկանուշի ընտանեկան պատմությունը ներկայացնելը չէ: Գրողին ավելի մեծ խնդիրներ են հետաքրքրում՝ նոր ժամանակներում մարդկային-հասարակական նոր հարաբերությունների ձևավորում, «հայրերի ու որդիների» պայքար, բնության և մարդու աղճատված կապերի վերականգնում, որոնք նա փորձում է ներկայացնել մի ընտանիքում, ավելի մեծ առումով՝ լեռնային մի գյուղում տեղի ունեցող իրադարձությունների ընդհանուր համապատկերում: Գլխավորն, անշուշտ, այդ իրադարձությունների ազդեցությունն է մարդկային հոգեկերտվածքի, նրա վարքագծի, բնավորության դրսևորումների վրա:

Թեմատիկ առումով «Լեռնցիների» շարունակությունն է «Բարի առավոտ» վեպը, որտեղ Ս.Այվազյանին հաջողվել է հաղթահարել «Խորածորցիք» և «Լեռնցիներ» վեպերում առկա մի շարք թերություններ: Նախ այն աչքի է ընկնում «հարցադրումների սրությամբ, կերպարների մեկնաբանության հեղինակային յուրովի սկզբունքով, արդիականության կենդանի զգացողությամբ»¹⁶, ինչը հեղինակին հնարավորություն է տալիս ցուցադրելու «անհատի պաշտամունքից հետո մեր հասարակական կյանքում հաստատված մարդկային հարաբերությունների գեղեցկությունը»¹⁷, այնուհետև՝ նախորդներից տարբերվում է կառուցվածքային առումով՝ սյուժետային հիմնական գծերը հանդես են գալիս փոխկապակցված կերպով, հերոսների գործողությունների արտացոլումը զուգակցվում է անհատի

¹⁵ Նույն տեղում, էջ 453:

¹⁶ Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, գ. 2, էջ 289:

¹⁷ Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, հ. 2, էջ 438:

պաշտամունքի հաղթահարումից հետո լեռնաշխարհում տեղի ունեցող իրադարձությունների ընդհանրացված պատկերման հետ:

Առօրեական-կենցաղային փաստերը դարձնելով գեղարվեստական արձածումների նյութ՝ Ս.Այվազյանը կարողանում է նուրբ դիտարկումներով բացահայտել իր հիմնական հերոսներին, թափանցել նրանց ներաշխարհը, յուրաքանչյուրին ներկայացնել իր անհատականության բնորոշ գծերով:

Վեպում չկան այուժետային ավելորդ ծավալումներ, հեղինակային անհարկի միջամտություններ ու մակերեսային մեկնաբանություններ: Վերպարներն իրենք են գործողությունների միջոցով բացահայտում իրենց, և նրանցից յուրաքանչյուրը որոշակի դերակատարում ունի կոնֆլիկտի հանգուցալուծման ընթացքում: Վեպի այուժետային գծերը, ծավալվելով տարբեր ուղղություններով, գործողությունների կուլմինացիոն կետում միահյուսվում են միմյանց ու հանգուցալուծումը դարձնում փաստարկված ու համոզիչ:

1950-ականների հասարակական-քաղաքական մթնոլորտի համապատկերում Արշավիր Դագեայանի կյանքի ու գործունեության, լեռնաշխարհի մարդկանց հոգսերի ու մտահոգությունների, սովորույթների, աշխարհընկալման յուրահատկությունները ներկայացնող այուժետային գծին զուգահեռ ներկայացվում է Ցոլակ Շափաղյանի ու նրա նմանների կյանքի «փառավոր» ուղին՝ բացահայտելով մինչև օրս էլ մարդկանց ու հասարակական կյանքը դժոխքի վերածող մի շարք երևույթների պատճառներն ու հետևանքները:

1959թ. Ս.Այվազյանը հրատարակեց «Տուր ձեռքդ, կյանք» ինքնակենսագրական վիպակը, որն անուշադրության մատնվեց քննադատության կողմից: 1962-ին, փոփոխություններից ու լրացումներնից հետո, այն վերահրատարակվեց որպես ծավալուն վեպ:

Վեպը սկսվում է Շոմիկի որբ մանկության նկարագրությամբ: Հենվելով ինքնակենսագրական փաստերի վրա՝ Ս.Այվազյանը քայլ առ քայլ ներկայացնում է իր սերնդի պատմությունը, այն ծանր ու դաժան փորձությունները, որոնց միջով անցել է այդ սերունդը:

Շոմիկի մանկությունն անցել է քաղաքացիական կռիվների տարիներին, և նրա մանկական հիշողություններում անջնջելիորեն դրոշմվել են բազմաթիվ ահասարսուռ տեսարաններ՝ գնդակահարություններ, կախաղաններ, անմարդկային խոշտանգումներ: Մարդիկ դարձել են անտարբեր ու չար, խիտունջի պես իրենց պատյաններում պարփակված: Բարքերի անկումն իր հետքն է թողնում Շոմիկի հոգեբանության վրա, խոր նստվածքներ տալիս, մշակում աշխարհաճանաչողության նոր մեթոդներ ու եղանակներ: Հետո սկսվում են որբանոցային կյանքի, ճիշտ է, ինչ-որ չափով նախկինից տարբերվող, մի քիչ ավելի բարեկեցիկ, բայց բնության գրկում ազատ մեծացած երեխայի համար իր օրենքներով ու կանոններով անսովոր տարիները:

Տարիների հետ ընդլայնվում են Շոմիկի ու կյանքի շփման եզրերը, մակությունից պատանեկության անցման շրջանը հատկանշվում է ռոմանտիկական որոնումներով: Նորից ծանր կյանք, գրկանքներ,

անգորությունից ահագնացող ներքին պտոթկումներ, մորն օգնելու համար երեխայի ուժերից վեր աշխատանք, պատանեկան սիրո ջերմ զգացմունքներ, հուսախաբություններ ու հուսալքումներ: Առանձնակի ուշադրության է արժանի գրողի պատկերամտածողությունը, բնության նուրբ զգացողությունը, գուներանգների ու հնչերանգների համադրությունները հերոսների տարբեր հոգեվիճակների հետ:

1982թ.՝ Ս.Այվազյանի մահվանից մեկ տարի անց, տպագրվեց «Խնձորեսկ» վեպի առաջին հատորը: Անավարտ մնացած վեպի գաղափարը հեղինակը վաղուց էր հղացել: Տարիներ շարունակ գրողը նյութեր էր հավաքում իր նոր վեպի համար: Ուսումնասիրում էր գյուղի հազարամյա պատմությունը, գրի առնում գրույցներ, ավանդապատումներ, գյուղի նշանավոր մարդկանց մասին պատմություններ: Իր իսկ խոստովանությամբ՝ «Խնձորեսկը» պիտի լիներ «իր կյանքի» գիրքը, ստեղծագործական երկարատև որոնումների հանրագումարը, երախտիքի, որդիական անկաշառ սիրո համեստ արտահայտությունը ծննդավայրի ու բոլոր նրանց նկատմամբ, ովքեր մանկուց իր հետ են եղել ու անմոռանալի հիշողություններ թողել իր կենսագրության մեջ:

«Խնձորեսկը» մի շարք նկատառումներով կարելի է նաև պատմավեպ համարել, որովհետև հեղինակը «մացառների մեջ կորած արահետով» տանում է «տասը դար ապրած» իր ծննդավայրի պատմության խորքերը: Հին Խնձորեսկի յուրաքանչյուր ժայռ ու քար պատմության լուռ վկաներն են ու հայրենակիցների արյունով են ցողված, մացառներով պատված յուրաքանչյուր շիրմաքարի տակ սուրբ մատուցներ են թաղված:

«Խնձորեսկը», սակայն, դարասկզբի իրադարձությունները ներկայացնող կենսագրական-հոգեբանական վեպ է այն առումով, որ հեղինակը ոչ թե պատմական դեպքեր, իրադարձություններ ու դեմքեր է ներկայացնում, այլ փորձում է բացահայտել գենետիկական այն ազդակները, որ փոխանցվել են սերնդեսերունդ, ձևավորել բնավորության գծեր, սովորություններ ու ավանդույթներ, որ բնորոշ են հին ու նոր խնձորեսկցիներին:

Մի ուրույն աշխարհ է ներկայացնում Ս.Այվազյանն իր վեպերով, որոնց մեջ նա ավետում է լուսի, բարության և արդար կյանքով ապրելու խորհուրդը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏՄԱԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Գրապատմական առաջընթացի 1960-ականների շրջափուլը հատկանշվեց նաև անցյալի թեմատիկայի նկատմամբ հետաքրքրության աննախադեպ աճով, ինչը պայմանավորված էր նախ՝ անհատի պաշտամունքի արդյունքում հասարակական-քաղաքական մթնոլորտի առողջացման միտումներով, այնուհետև՝ պատմական ճշմարտությունների բացահայտման հասունացած պահանջներով: Գաղափարական կապանքների «թուլացման» հետևանքով գրողներն արդեն համեմատաբար ազատ էին պատմության նոր

Ժամանակների ընդգրկման, թեմատիկ տեսադաշտի ընդլայնման, պատմության փիլիսոփայության նորովի ընկալումների առումով:

Այդ տասնամյակը հոգևոր զարթոնքի բուն շրջան էր նաև մեր ժողովրդի համար: Մոտենում էր Հայոց մեծ եղեռնի 50-ամյակը: Հասարակական միտքն ավելի ու ավելի էր սևեռվում դեպի պատմության տասնամյակներ շարունակ փակի տակ պահված իրադարձությունները: Երիտասարդության շրջանում հատուկանում էին նոր տրամադրություններ, ձևավորվում էին ազգային մտածողության նոր մեթոդներ: Քաղաքական մթնոլորտի առողջացման բարերար ազդեցությունները պատմական արդարությունը վերականգնելու հույսեր էին ներշնչում:

Մեր պատմավիպասանությունը հիմնականում անդրադարձել է 4-5-րդ դարերի ազատագրական շարժումներին: Սկսած 60-ական թ.թ.՝ գրողների ուշադրությունը սևեռվեց նաև 17-18-րդ դարերի հերոսական ու ողբերգական իրադարձություններին, մի ժամանակահատված, երբ Դավիթ Բեկի ղեկավարած համաժողովրդական շարժումը նոր ուժով բորբոքեց ազգային-ազատագրական պայքարի կրակը:

17-18-րդ դարերի իրադարձություններին նվիրված վեպերն առաջին հերթին «հետաքրքրություն են ներկայացնում պատմության հետագա դարերի ընթացքը լուսաբանելու տեսակետից, հատկապես՝ կապված Ռուսաստանի հանդեպ քաղաքական կողմնորոշման պատմական փաստի լուսաբանման հետ»¹⁸: Այս հարցը, ինչպես պատմական անցյալում, այնպես էլ աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումների մեր օրերում խիստ հրատապ է, ինչը խոսում է վերոհիշյալ վեպերի արդիական նշանակության մասին:

Ս.Այվազյանը երկար ժամանակ է աշխատել «Ճակատագիրն հայոց» վեպի վրա, որ լույս տեսավ 1966թ.: Նա ուսումնասիրել է ժամանակաշրջանին վերաբերող հսկայական գրականություն, պատմագիտական, արխիվային նյութեր, մի քանի անգամ վերամշակել ու խմբագրել է վեպը: Վեպի մի հատված՝ որպես առանձին վիպակ, «Վերջին օրը» խորագրով տպագրվել է 1959թ.:

Վիպական գործողությունները սկսվում ու ծավալվում են Մյունքում, Վայոց ձորում, Շահապունիքում:

Ժողովրդական ըմբոստության ալիքը սկիզբ է առնում Խնձորեսկում ու տարածվում Մյունյաց լեռնաշխարհի բոլոր գյուղերում, հասնում մինչև Շահապունիք ու Վայոց ձոր: Մա տարածաշրջանում բռնկված ապստամբության երկրորդ ալիքն էր, որը, ճիշտ է, իր թափով ու մասշտաբներով զիջում էր Դավիթ Բեկի գլխավորությամբ դարասկզբի համազգային շարժմանը, բայց ժողովրդի համար հույժ կարևոր էր ազատագրական պայքարի շարունակության, մարտական ոգու պահպանման առումով:

¹⁸ Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, Երևան, 2000, էջ 5:

Գործողությունները ծավալվում են այուժետային երկու հիմնական ուղղություններով, որոնք պատումի ընթացքում ճյուղավորվելով՝ բացահայտում են հեղինակի գաղափարական-գեղագիտական միտումը: Հայաստանի դաժան համայնապատկերը հուշում է ինքնապաշտպանության կազմակերպման, ցաքուցրիվ ուժերի համախմբման ու ստեղծված իրավիճակից էլքերի որոնման ճանապարհներ: Լցվել է ժողովրդի համբերության բաժակը, այլևս անհնարին է հագուրդ տալ պարսիկ խաների՝ օրեցօր բացվող ախորժակին, համակերպվել ամենաչնչին առիթներով գյուղերում հայտնվող պատժիչ ջոկատների վայրագություններին:

Վեպի երեք մասերից երկուսում («Մահ կամ ազատ Հայաստան», «Մենք պիտի ապրենք») հիմնական գործողությունները ծավալվում են ապստամբության բոցերով բռնկված հայկական գավառներում: Դրանք ոչ թե պարսկական ղզբաշների դաժանությունների դեմ ուղղված սովորական պոռթկումներ են, այլ համաժողովրդական ցասումի դրսևորումներ հանուն ժողովրդի գոյապահպանության, հայրենի հողի ու մայրենի լեզվի, մշակութային դիմագծի ու ամենակարևորը՝ ազգային արժանապատվության:

«Մեռնել ու այլևս չտանել թշնամու ստորացումը», - սա է ապստամբության դրոշն առաջինը բարձրացրած խնձորեսկցիների նշանաբանը, որ ոտքի հանեց Շահապունիքի, Անգեղակոթի, Չագեձորի, Կոռնիձորի, Բոլորաբերդի ու տասնյակ այլ շեների բնակչության բոլոր խավերին, անգամ՝ միշտ «խաղաղասիրաբար» տրամադրված հոգևորականությամբ:

Համաժողովրդական ազատագրական պայքարի համապատկերում վարպետորեն է գծված Իսրայել Օրու հոր՝ Շահապունիքի մեղիք Իսրայելի կերպարը: Նրան հանգիստ չի տալիս ժողովրդի ճակատագրի հարցը: Նախիջևանի Շարիֆ խանը «քաղցկեղի պես տարածվել էր հայոց հողի վրա և ձգտում էր թունավոր արմատներ ձգելով կաշկանդել ու մեռցնել հայոց հոգին»: Օր օրի դատարկվում էին հայկական գյուղերը, Շարիֆ խանն ամեն ինչ անում է, որ ձեռք գցի Շահապունիքը, ապա և Բոլորաբերդի Սրկուղինք ամբոցը, Հրաշքաբերդը, որ Սյունիքի հյուսիս-արևելյան կողմի դռներն էին»: Բայց նրա ճանապարհին կանգնած էր մեղիք Իսրայելը, որ երբեք անպատիժ չէր թողնում շահի ավարառուներին:

Ժողովրդի գոյատևելու հաստատակամության, ազգային ոգին ու դիմագիծն անաղարտ պահելու, հոգևոր արժեքները սերունդներին ի պահ թողնելու գաղափարների մարմնացումն է մեղիք Իսրայելը. «Բայց չէ՞ որ փոխելով հավատը, կկորչի՝ ինչ ազգային է, ինչ ձեռք է բերվել հյուլե առ հյուլե, կաթիլ առ կաթիլ ու դարձել հոգևոր հարստություն: Հավատը փոխելով, ազգը կկորցնեք իր հոգևոր հարստությունը, կդատարկվեք, որ ծանր է ավելի, քան մահը... Եվ հետո ինչ էլ լինի, մենք վերածնվելու և ապրելու ենք միշտ... Ես համոզված եմ դրանում: Համոզված եմ, որովհետև մեզնից մեծ է մեր հոգևոր ուժը, իսկ նա գորեղ է բոլոր ուժերից, պահող է»¹⁹:

¹⁹ Ս.Այվազյան, Ճակատագիրն հայոց, էջ 132-133:

Մեղիք Բարայելն օժտված է ոչ միայն բարձր ինտելեկտով, սրփափ դատողությամբ, դժվարին իրավիճակներում արագ կողմնորոշվելու հմտություններով, այլև մարդկանց վրա իր բարեկիրթ վարվելաձևով ու պատկառելի արտաքինով մոզական ազդեցություն թողնելու շնորհներով: Սպահանում Շահին ու պալատականներին զարմացրել էին ոչ միայն աշուղներն ու նվագածուները, այլև ամենից շատ մեղիք Բարայելն իր փայլուն ճատերով, որ խելոք էին ու համարձակ: Ապա իր պարերով, սրամտություններով, վարակիչ ծիծաղով, պատկառելի արտաքինով»:

Հայրենիքի նկատմամբ անբեկանելի զգացմունքներով է դաստիարակում մեղիք Բարայելն իր որդիներին, հատկապես՝ Յավրիին, որի հետ մեծ հույսեր է կապում: Ուշագրավ են նրա պատգամները որդուն՝ եվրոպական երկրներ դիվանագիտական առաքելության մեկնելուց առաջ. «Այլ են հոգսերն այն աշխարհների մարդկանց, որ դու պիտի լինես, և այլ են նրանց հայացքները: Դու ունես միայն ու միայն մի հոգս՝ դա քո ժողովրդի մեծ հոգսն է, ու միայն մի հաճույք, որ ժողովուրդը քեզ է ապավինել իր ճակատագրի հարցը», ուրեմն՝ «երդվիր Պռոշյան տոհմի այն անուններով, որ հանուն ժողովրդի նահատակվեցին ու սրբացան: Երդվիր մորդ կաթով...»²⁰:

Նա համոզված է, որ որդին այդ առաքելությունից կվերադառնա «որպես հայոց աշխարհին գարուն ավետող ծիծեռնակ», «կառնի իր ձեռքը Շահապունիքի մելիքությունը, կծաղկեցնի որպես Պռոշը ծաղկեցրեց Գեղարդա ձորը, կապրեն բոլոր մելիքները միաբան, մի ընդհանուր դրոշի տակ, որ կկոչվի հայոց արքայական դրոշ»²¹:

Ժողովուրդների պատմությունը ժամանակի հրամայականով ասպարեզ իջած շատ անհատներ է ճանաչում, որոնց «կյանքի ու ճակատագրի գեղարվեստական թափանցումներով են հեղինակները հասնում ժամանակի ու պատմության փիլիսոփայության հայտնաբերմանը»²²:

Մեր պատմության մեջ այդպիսի անհատներից է Բարայել Օրին, ում աստանդական կյանքն ամբողջությամբ նվիրված է եղել հայ ժողովրդի՝ պարսկաթուրքական լծից ազատագրման պայքարին: Այդ առաքելությամբ նա եղել է եվրոպական համարյա բոլոր խոշոր երկրներում, հանդիպումներ ունեցել պետությունների առաջին դեմքերի, պետական հայտնի գործիչների հետ:

Հայոց աշխարհում արտաքին օգնության հետ կապված հույսերը պտտվում են երկու առանցքի շուրջ. «Մի՞ թե հայտնի չէ ամենքիդ, որ մեր հույսը պապն է՝ Հռոմեա-գերմանական սրբազան կայսրությունը, Ֆրանսիան»՝ Էջմիածնի խորհրդում պնդում է կաթողիկոս Հակոբ Զուրաբյեցին, հայրենիքի փրկության միակ ճանապարհը համարելով կաթոլիկ եկեղեցու հետ միաբանվելը: Եվ պատահական չէ նրա անսահման ոգևորությունը, երբ կաթողիկոսին, ապա նաև հայ ժողովրդին դավանափոխ անելու նպատակով

²⁰ Նույն տեղում, էջ 243:

²¹ Նույն տեղում, էջ 245:

²² Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, գ. 3, Երևան, 1986, էջ 25:

Էջմիածին են ժամանում Հռոմի Կղեմիս Ժ պապի պատվիրակները՝ Փսքրփոն և Պետիկ հոգևորականները. «Կարծես թե պիտի իրականանար այն, ինչ մարգարեաբար գուշակել էր Ներսես Պարթևը վեց հարյուր տարի առաջ, թե պիտի գա մի ժամանակ, երբ արևմուտքից հաղթականորեն կարշավեն հռոմեացիները կամ ֆրանկները, կջախջախեն անհավատների տերությունը և կազատեն գերության մեջ տանջվող քրիստոնյաներին»:

Ժամանակի ոգուց էին բխում նաև ռուսամետ ուժերի փաստարկները՝ լարված հարաբերություններ Պարսկաստանի ու Թուրքիայի հետ, որոնցից վերջինիս պանթուրքական նկրտումների ճանապարհին Հայաստանը կոկորդում խրված ոսկոր էր, Ապշերոնյան թերակղզու և Մերձավոր արևելքի նկատմամբ օրեցօր մեծացող տնտեսական հետաքրքրություն և վերջապես՝ ռուսական բանակում և արքունիքում զգալի թվով հայերի առկայություն, որը ոչ պակաս կարևոր գործոն է բանակցությունները ցանկալի ուղղությամբ տանելու ճանապարհին. «Մենք միայն մի հույս ունենք, և դա Ռուսաստանն է: Մենք ապրում ենք այլահավատ ու բարբարոս տերությունների աքցանի բերանում, և եթե Ռուսաստանը չկարողանա էլ ետ քաշել այդ աքցանը, թույլ չի տա, որ հուփ բերեն ու ճզմեն մեզ: Մենք միայն Ռուսաստանի օգնությունը պիտի խնդրենք: Վասնզի եթե մենք ապրելու ենք որպես հզոր ժողովրդի մի թանկագին բեկոր, ապա միայն Ռուսաստանի հովանու ներքո»:

Վեհաժողովի մասնակիցների մեծ մասի կարծիքն է հայտնում Սուրեն սրբազանը:

Քաղաքական կողմնորոշումների այս երկու ծիրում են մինչև օրս շարունակվում եվրոպամետ ու ռուսամետ քաղաքական ուժերի գաղափարական հակամարտությունները:

Վեպի երրորդ՝ «Առաքելությունից առաքելություն» գիրքը, որտեղ ծավալվում են սյուժետային հիմնական գծերից մեկի գործողությունները, նվիրված է Իսրայել Օրու՝ եվրոպական երկրներում դեգերումներին, բազմաթիվ հանդիպումներին, որոնց ընթացքում նա փորձում է քրիստոնյա «աշխարհի արդար դատին հանձնել հայոց հարցը», օգտվել տարածաշրջանում տնտեսական ու քաղաքական շահեր հետապնդող երկրների նկրտումներից և նրանցից ոչ թե պարզապես օգնություն աղերսել կամ ակնկալել, այլ համագործակցության փոխշահավետ ծրագրեր առաջադրել, - սա էր եվրոպա մեկնող վեց պատգամավորների հիմնական նպատակը, իսկ յուրաքանչյուրի խնդիրն է, ձևակերպում է Հակոբ Ջուղայեցին, - Եվրոպային ապացուցել, որ հայն «իրավունք ունի աշխարհում ապրելու՝ տնօրինելու իր կյանքը՝ ձեռամբ սեփական»:

Այդ առաքելությունը կաթողիկոսը համեմատում է Ավարայրի հետ, որտեղ այս անգամ հայերը պետք է կռվեն ոչ թե զենքով ու գորքով, այլ «հազարամյակների պատմությունով»:

Վեց պատգամավորների եվրոպական ուղևորությունն ընդհատվում է Պոլսում, և միայն Իսրայել Օրին է շարունակում իր ուխտագնացությունը, որը տևեց քսան տարի ու վերջացավ օտար ափերում նրա վախճանով: Իր գլխավոր հերոսի կյանքի վերջին երկու տասնամյակի կենսապատումը հեղինակը ներկայացնում է բազմաթիվ պատմագրական վավերագրերի ու արխիվային փաստաթղթերի հարուստ նյութերի հիման վրա՝ կերտելով հասարակական-

քաղաքական գործիչի ու վառ անհատականության մի ավարտուն կերպար: Դեպքերի «Ժամանակագրական շարժման սկզբունքը», որը որոշ գրականագետներ համարում են վեպի գլխավոր թերություններից մեկը, բացարձակապես չի խանգարում հեղինակին՝ հետևելու պատմության շարժման ընթացքին: Տարածաժամանակային կորդինատների զուգահեռներն, ընդհակառակը, ավելի են նպաստում հեղինակի գեղագիտական իդեալի բացահայտմանը: Հենց այդ զուգահեռների հատման կետերում են դրսևորվում հեղինակի կերպարակերտման յուրահատկությունները, մարդկային կյանքի իմաստն ու նպատակը նույն հարթության վրա ներկայացնելու նրա ձգտումները:

Հայրենիքի փրկության գործն է այն հարթությունը, որտեղ ծավալվում են Իսրայել Օրու գործողությունները, ու հեղինակին հաջողվում է ներդաշնակել պատմության ու հերոսի կենսապատումի առավել բնութագրական տեղաշարժերը:

Պատմության ընթացքի մասին Յավրին իր յուրատեսակ պատկերացումներն ունի: Ազգովին միաբանվելու, հարկ եղած դեպքում ազգովին՝ հանուն արժանապատվության զոհվելու հոր մտորումներին նա հակադարձում է. «Մի ամբողջ ժողովրդի մահ, ինչ տեսակ էլ որ լինի, հերոսական չի լինի, որովհետև կենդանի մնացածներն են հերոսացնում նահատակներին: Եվ հետո այն մահը, որ կյանք չի ստեղծում, չի կարող հեռսական կոչվել: Այդպիսի համազգային մահը տապանագրի պես մի քանի բառ միայն կարող է թողնել աշխարհի օտարատառ պատմության մեջ. «Եղել է մի ժողովուրդ, նրան հայ են կոչել...» և վերջ»²³:

Հանուն հայրենիքի Յավրին պատրաստ է հոր փոխարեն մեկնել Եվրոպա, դեգերումների ընթացքում լուռ ու մունջ տանել բոլոր ստորացումները, չարչարանքները և հայրենիք չվերադառնալ՝ առանց աշխարհի արդար դատին հանձնելու հայոց հարցը: Ու բոլորովին էլ պահի ազդեցությամբ ու պաթետիկ չեն հնչում հորն ուղղված նրա երդման խոսքերը. «Երդվում եմ ազատել մեր ժողովուրդը դժոխքից: Եթե չկարողանամ, ապա կմեռնեմ այնպես, որ մի ճրագի լույս դառնամ նրա ճանապարհին»²⁴:

Վեպի ուշագրավ հատվածներից է Պետրոս Մեծի հետ Իսրայել Օրու հանդիպումները ներկայացնող սյուժետային գիծը: Ցարը մեծապես հետաքրքրված էր Օրու անձնավորությամբ. «Երկու տարվա ընթացքում նա ուսումնասիրել էր Օրու ներկայարած գրությունները, մանավանդ՝ ծրագիրը ու ցարին ապշեցրել իր ճանաչողական ընդունակությունների, դիվանագիտական մտքի, ռազմական գիտելիքների խորությամբ: Առաջին իսկ հանդիպումից ցարի տպավորությունը այն չէր, թե իր մոտ եկած երիտասարդը պետություն չունեցող մի փոքրիկ երկրի աղերսող պատգամախոս է. «Ես հենց այս բուպեին ձեր ուսերին կդնեի գեներալ-ֆելդցեխմեյստերի ուսադիրներ և վստահ

²³ Ս.Այվազյան, Ճակատագիրն հայոց, էջ 208:

²⁴ Նույն տեղում, էջ 208:

կողարկեի շվեդների դեմ: Այդ իրավունքն ինձ տալիս է սա,- Պյոտրը ձեռքը դրեց ծրագրի վրա»²⁵:

«Ճակատագիրն հայոց» վեպի բոլոր մասերը միմյանց շաղկապված են ներքին սերտ կապով: Կոմպոզիցիոն կենտրոնը դարձնելով Իսրայել Օրու կերպարը՝ Ս.Այվազյանը նրան ներկայացնում է թեմայի զարգացման տրամաբանությամբ պայմանավորված իրադարձությունների հորձանուտում: Քայլ առ քայլ հեղինակն ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում է իր գլխավոր նպատակի վրա՝ արտահայտելու այն գաղափարը, որ հայ ժողովրդի ճակատագիրը պետք է կապել Ռուսաստանի հետ. «Մենք մեր բախտը Ռուսաստանի հետ պիտի կապենք... Միայն ու միայն: Ե՛վ հարևան է, և՛ մեծ է, հավատով ուղղափառ»²⁶: Եսայի Հասան-Ջալալյանի այս պատգամը վերջիվերջո հավատամք է դառնում իսրայել Օրու համար, որը և ներկայացնում է հեղինակը դեպքերի ու իրադարձությունների զարգացման ներքին տրամադրությամբ ու համապատասխան կառուցվածքի միջոցով:

Վեպի երրորդ՝ «Առաքելությունից առաքելություն» գրքում, Իսրայել Օրին հասունանում է որպես գաղափարական պայքարի մատիկ, ով հայրենիքի համար օրհասական այդ ժամանակներում կրելով բազմաթիվ զրկանքներ, ենթարկվելով ստորացումների ու նվաստացումների, չի կորցնում հայոց ճակատագրի հանդեպ ունեցած լավատեսական հույսերը:

Վեպն ավարտվում է Իսրայել Օրու հուղարկավորության՝ Աստրախանում նախադեպը չունեցած խորհրդանշական պատկերով. «Դագաղի հետևից, որպես անտանելի ծանրության տակ, քայլում է Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը՝ շրջապատված հայ և ռուս հոգևորականներով: Ետևում թափորն է՝ արհեստավորներ, բեռնակիրներ, առևտրականներ, գիր ու գրքի մարդիկ՝ զանազան ազգություններից.

- Ի՞նչ մարդ է հանգուցյալը,- հարցնում են անցորդները:

- Հայ քրիստոնյա: Չարչարվել է իր ժողովրդին օտարի ոտնատակից ետ քաշելու...

Հարցնողները գլխարկները հանելով՝ միանում են հուղարկավորողներին»²⁷:

Իսրայել Օրուն հուղարկավորության ժամանակ լավագույնս է բնութագրում Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը. «Նա հայ էր, հայրենասեր, որ վառվում էր իր ժողովրդի ցավերով և իր կրակի լույսով լուսավորում նրա ճանապարհը: Եվ հանգավ նա ճանապարհին, կմնա նրա կրակի լույսը»²⁸:

Թեմատիկ ու գաղափարական առումով «Ճակատագիրն Հայոցի» շարունակությունն է «Առավոտ լուսո» վեպը, որը նվիրված է Խ.Աբովյանի կյանքին ու գործունեությանը:

²⁵ Նույն տեղում, էջ 428:

²⁶ Նույն տեղում, էջ 416:

²⁷ Այվազյան Ս., Տուր ձեռքդ, կյանք, էջ 159:

²⁸ Նույն տեղում, էջ 160:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ եզրակացությունների կարելի է հանգել «Սուրեն Այվազյանի գեղարվեստական արձակը» թեմայի ուսումնասիրության արդյունքում:

1. Ս.Այվազյանի պատմվածքները, նովելները, քնարական մանրապատումները, վիպակներն ու վեպերը ուշագրավ են ոչ միայն բնաշխարհի կոլորիտային պատկերներով, լեռնաշխարհի մարդկանց յուրահատուկ կերպարներով, այլև գաղափարական հարցադրումներով: Ս.Այվազյանի պատմվածքների ժողովածուները ընդգրկում են տարբեր շարքեր, որոնց մեջ գետեղված են նյութով ու տրամադրությամբ հարագատ, իրար հետ փոխկապակցված գործեր: Այս եղանակով հեղինակն ընդգծում է յուրաքանչյուր շարքի նյութի որակական միատեսակությունը:

2. Գրողի ուշադրությունը փոքր կտավի ստեղծագործություններում սևեռված է բարոյահոգեբանական խնդիրների վրա, որոնք ներկայացվում են հիմնականում գյուղական կյանքի ու կենցաղի համապատկերում:

Շարունակելով պատմվածքի դեմիրճյանական ու գոյանական ավանդույթները՝ Ս.Այվազյանը փորձում է ավելի ընդլայնել նրա թեմատիկ շրջանակները, հաղթահարել տարածական ու ժամանակային սահմանափակումները:

Նրա պատմվածքներն իրենց կառուցվածքով ու ոճական հյուսվածքով ինչ-որ չափով դուրս են գալիս ժանրի դասական հասկացության շրջանակներից: Ս.Այվազյանն ավելի շատ հակված է դեպի քնարական արձակը, որը պահանջում է նյութի դիմադրությունը հաղթահարելու այլ մոտեցումներ, կերպարակերտման ու պատկերաստեղծման այլ եղանակներ ու ձևեր:

3. Ս.Այվազյանի պատմվածքներն արտահայտում են հերոսների ներաշխարհի ոչ միայն հուզական դրսևորումները, այլև նրանց իրական հարաբերությունները, կենսակերպի յուրահատկությունները, նյութի ճանաչման ու նրա դիմադրության հաղթահարման եղանակով որոշակիորեն տարբերվում են սերնդի մյուս արձակագիրների ստեղծագործություններից: Ս.Այվազյանի պատմվածքների քնարականությունն արտահայտում է աշխարհավերաբերմունքային լայն ու խոր բովանդակություն և հուզական թրթիռներ ու լիցքեր է հաղորդում պատումի ընթացքին: Այստեղ է, որ գրողը շարունակում է հայրենի հողի ավիճներով և ժողովրդական զգացմունքներով սնվող բակունցյան արձակի ավանդույթները:

4. Գրողը հոգեբանի նուրբ զգացողությամբ է պեղում իր փոքր կտավի հերոսների ներաշխարհը, բացում բազմաշերտ ծալքեր: Այդ հերոսներից շատերը ծայրաստիճան աղքատության մեջ ապրող մարդիկ են, և ինչքան մեծ էր դարասկզբի հեղաբեկումների հետ կապված հավատը, ինչքան հուսատու էին նորը հաստատող գաղափարախոսական խոստումները, այնքան ավելի խոր եղավ հուսախաբությունը, որ անդառնալի ավերածություններ գործեց մարդկանց հոգիներում: Այնպես որ, Ս.Այվազյանն այնքան էլ չի ոգևորվում «նորով» և, ինչպես փոքր կտավի ստեղծագործություններում, այնպես էլ

վեպերում, ավելի շատ կենտրոնանում է անհատի ու անհատակաևության խնդիրների վրա:

5. Ս.Այվազյանի փոքր արձակի էջերում նախ և առաջ պետք է փնտրել մարդկային իսկական արժեքներ, հոգեբանական նուրբ ներսուզումներ, մարդու ու բնության, անհատի ու հասարակության ներդաշնակություն ու բարդ հարաբերություններ: Գրողն իր փոքր կտավի ստեղծագործություններում ավանդում է լույսի խորհուրդը, ընթերցողին տանում մանկության հեռավոր հովիտները, որ լեփ-լեցուն են անկրկնելի գույներով ու շշուկներով՝ հեքիաթային ու դյուլիշ: Տխրություն ու ցավ կա այդ պատմվածքներում, դառը հուշեր, անմոռանալի պատկերներ, հարագատ մարդիկ, որոնցից շատերն այլևս չկան, բայց յուրաքանչյուրն ինչ-որ մի հետք է թողել իրենից հետո:

6. 1950-ականների կեսերից գրողի ուշադրությունը սևեռվեց ավելի ընդգրկուն խնդիրների վրա: Ընդլայնվեցին թեմատիկ ընդգրկումների շրջանակները, անհատի ու հասարակության, բնության ու մարդու, ընտանիքի, սիրո, բարոյականության և այլ հարցեր տեղափոխվեցին նոր հարթություններ, մեկնաբանվեցին գրողական այլ մոտեցումներով:

7. Բնականաբար, Ս.Այվազյանի ոչ բոլոր վիպակներն ու վեպերն են, որ այսօր էլ կարող են հետաքրքիր լինել ընթերցողի համար, ուշադրության արժանանալ հարցադրումների հրատապությամբ, պրոբլեմների սրությամբ, գեղարվեստական յուրահատկություններով ու գրական բարձր վարպետությամբ:

Հատկապես մեծ կտավի առաջին ստեղծագործություններում գրողին ոչ միշտ է հաջողվում կերտել ավարտուն կերպարներ, զգալ հասարակական կյանքում ու հերոսների գործողություններում տեղի ունեցող տեղաշարժերն ու փոփոխությունները, հերոսներին ներկայացնել ոչ թե արհեստականորեն ստեղծված, այլ բնական միջավայրում, տուրք չտալ ժամանակի գաղափարախոսական պարտադրանքին, ներկայացնել հասարակական կյանքի սուր պրոբլեմներն ու արատները:

Սակայն գրողի այդ գործերը նույնպես արժանի են ուշադրության՝ մի կողմից հետպատերազմյան առաջին տասնամյակի գրական-գեղարվեստական զարգացումների յուրահատկությունների ճանաչման, մյուս կողմից գրողի ստեղծագործական դինամիկային հետևելու ու նրա գրական դիմանկարի ամբողջացման նկատառումներով:

8. Մեծ կտավի առաջին ստեղծագործությունների թերությունները հիմնականում հաղթահարվեցին «Բարի առավոտ», «Տուր ձեռքդ, կյանք», «Խնձորեսկ» վեպերում, որոնք աչքի են ընկնում հարցադրումների սրությամբ, արդիականության կենդանի զգացողությամբ: Այդ վեպերում չկան սյուժետային ավելորդ ծավալումներ, հեղինակային անհարկի միջամտություններ ու մակերեսային մեկնաբանություններ: Կերպարներն իրենք են գործողությունների միջոցով բացահայտում իրենց, և նրանցից յուրաքանչյուրը որոշակի դերակատարում ունի կոնֆլիկտի հանգուցալուծման ընթացքում:

9. Ս.Այվազյանի պատմավեպերն հետաքրքրություն են ներկայացնում պատմության հետագա ընթացքը լուսաբանելու տեսակետից, հատկապես՝

կապված Ռուսաստանի հանդեպ քաղաքական կողմնորոշման պատմական փաստի լուսաբանման հետ: Այս հարցը, ինչպես պատմական հեռավոր անցյալում, այնպես էլ աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումների մեր օրերում խիստ հրատապ է, ինչը խոսում է վերոհիշյալ վեպերի արդիական նշանակության մասին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Մուրեն Այվազյանի «Բարի առավոտ վեպը», Հայագիտական հանդես, հ. 1-2 (18-19), Երևան, 2012, էջ 64-69:
2. Մուրեն Այվազյանի «Չորերի ձայնը» պատմվածաշարը, Հայագիտական հանդես, հ. 1 (25), Երևան, 2014, էջ 129-133:
3. Մուրեն Այվազյանի «Պատմագեղարվեստական արձակը», Ակունք (գիտամեթոդական և ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու), թիվ 2 (12), Երևան, ԵՊՀ հրատ., 2015թ., էջ 46-49:
4. Մուրեն Այվազյանի մանրապատումները, Հայագիտական հանդես, հ. 1(31), Երևան, 2016թ., էջ 67-72:

ЕММА ГАГИКОВНА НИКОЯН

“ХУДОЖЕСТВЕННАЯ ПРОЗА СУРЕНА АЙВАЗЯНА”

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02 – “Армянская литература новейшего периода”. Защита состоится 29-ого апреля 2016г. в специализированном совете 003 “Армянской и зарубежной литературы” действующего в институте литературы им. М.Абегяна НАН РА. Адрес: г. Ереван, ул. Лусаворича 15.

Сурен Айвазян - один из известных авторов нового периода армянской литературы. Остротой задач, постановкой вопросов, высоким литературным мастерством его произведения могут быть интересны и в наши дни.

Данная работа является первой попыткой выявить характерные стороны творческого мастерства писателя в контексте современных требований литературно-научной мысли.

Исследование состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

Предметом исследования являются сборники рассказов писателя, многие из которых, в особенности "Совесть", можно удостоить наивысшей оценки, а также стихотворения в прозе и лирические миниатюры, чарующие своей многогранностью и эмоциональностью, повести и романы, с их широким пространственно-временным охватом и актуальными задачами.

Цель исследования - представить литературное наследие С. Айвазяна в контексте современных требований литературно-научной мысли и подвергнуть систематизированному анализу, показать приливы и отливы его творческого пути, задачи - придать целостность литературному портрету автора, определить его место и роль в общем потоке литературного движения того периода.

В первой главе исследования - "Малая проза" - мы обратились к рассказам из сборников С. Айвазяна «Неоконченный ковер» (1947г.), "Совесь" (1955г.), "Запорошенная весна моя" (1972г.), к циклу "Голоса из ущелий Хндзореска" и лирическим миниатюрам, наполненным тоской поиска человечности, скитаниями и безнадежным ожиданием, проблемами человека, оторванного от общества, тяжелыми душевными переживаниями и драмами, вопросами любви, семьи, нравственных ценностей.

Во второй главе - "Мир романа" - мы обратились к повести "Жители глубокого ущелья" ("Хорадзорцы") (1951г.) к романам "Горцы" (1955г.), "Дай руку, жизнь" (1959г.), "Доброе утро" (1964г.), "Хндзореск" (1982г.). Особое внимание мы уделили двум последним романам, где на широком фоне общественно-политических развитий наиболее ярко представлены человеческие судьбы, драматические переживания героев. Роман "Доброе утро", в котором автор описывает сельскую жизнь в первые послевоенные годы и в годы "оттепели", выделяется среди других романов, написанных на эту тему и ценен тем, что автору удалось, используя богатый исторический материал, описать сложную судьбу поколения, прошедшего через войну, выявить порочные черты общественной жизни. Роман "Хндзореск" мы рассматривали как одно из лучших произведений нового литературного периода в жанре хроники, попытались дать ему оценку в границах взаимосвязи с произведениями А. Бакунца "Киорес" и С. Ханзадяна "Книга о былом", обратиться к его структурным, языковым особенностям.

Произведения С. Айвазяна, представленные в этой главе, охватывают широкий временной отрезок – советизацию горного края и связанные с этим трагические события, неожиданные общественно-политические развития, изменения, следующие одно за другим, тяжелые душевные переживания, крайнее обнищание и тому подобное, что очень характерно для того переходного периода, абсурдное столкновение "мировоззрений", когда друг против друга выходят отцы и дети, родные и друзья, гражданские столкновения, характерные сцены сельской жизни в годы Великой отечественной войны, в послевоенные годы...

Третья глава – "Историко-художественная проза", посвящена романам "Судьба армянская" (1967г.), и "Аравот лусо" ("Светлое утро") (1977г.), в которых С. Айвазян описывает свои представления об "Армянском пути", пытается обосновать свое видение и представление о политических предпочтениях армянского народа, духовные борения, бои, ведущиеся ради сохранения своего существования, неопределимое значение осознания приоритета национального достоинства, сохранения национального душевного склада и национальных черт на этом пути.

В результате исследования темы мы пришли к следующим выводам:

Рассказы, новеллы, лирические миниатюры, повести и романы С. Айвазяна примечательны не только колоритным описанием природы, своеобразными образами жителей горного края, но и идеологическими вопросами.

Сборники рассказов С. Айвазяна включают в себя разные циклы произведений, связанных между собой общим настроением и материалом. Так автор подчеркивает качественное единообразие материала каждого цикла. "Голос

ущелей", "Встречи на дороге", "Запорошенная весна моя", "В стране нефти", "Голоса из ущелий Хндзореска", "Пантеон" и другие сборники рассказов отражают события разных временных отрезков, изменения, произошедшие в жизни горного края, отдельные эпизоды жизни людей с близким мировоззрением. И мы не ошибемся, если скажем, что таким образом автору удалось, конечно, не вполне, но преодолеть изобразительность и повествовательность рассказа предыдущего десятилетия, достичь новых качеств психологического повествования.

С. Айвазян более склонен к лирической прозе, что требует других подходов к сопротивлению материальному, другие формы и способы описания образов.

Внимание писателя сосредоточено на более широких задачах. Расширились рамки тематических охватов, вопросы личности и общества, человека и природы, семьи, любви, нравственности и другие перенесены в новые плоскости, истолковываются другими писательскими подходами.

Рассказы С. Айвазяна представляют интерес с точки зрения хода истории последующих веков, особенно, в связи с освещением исторического факта политических отношений с Россией. Этот вопрос, как и в далеком историческом прошлом, так и в наши дни неожиданных геополитических разработок, чрезвычайно актуален, что говорит о неустаревающем значении вышеупомянутых романов.

EMMA GAGIK NIKOYAN

SUREN AYVAZYAN'S FICTIONAL PROSE

Resume

Thesis abstract for obtaining a PhD degree in philological sciences for the profession 10.01.02 "Modern Period Armenian Literature". The public defense of the work is on the 29th of, april 2016 in the "Armenian and Foreign Literature" specialized council 003, operating within the Institute of Literature of the RA National Academy of Sciences . Address: Yerevan, 15 Lusavorich Street.

Suren Ayvazyan is one of the noteworthy authors of latter-day Armenian literature. The issues he reflects upon in his works, alongside with the acuteness of problems and the high level of his literary skills, is interesting nowadays as well.

The given work is the first attempt of revealing the characteristic features of the writer's creative skills within the framework of modern requirements of literary thought.

The analysis consists of an introduction, three chapters, a conclusion and a list of references.

The subject of the analysis are the author's collected works, which contain a big number of stories that deserve the best of compliments and the highest appraisal. This particularly applies to the stories included in the compilation titled "Conscience" ("Խիղճը"). We have also analyzed the author's prose poetry and lyrical miniatures, which are rather appealing for their polychromatic character and sentimentality, as

well as his novels and novelettes, which contain a wide scope of territorial and time inclusions and touch upon rather contemporary issues.

The aim of the research is to represent and conduct a systematized analysis of Suren Ayvazyan's literary legacy within the framework of modern requirements of literary thought, as well as to show the ups and downs of the author's literary career. The objectives of the work are to show the writer's literary portrait as a whole and to indicate his place and role in the present-day literary movement.

In the first chapter of our analysis titled "Flash fiction" we have scrutinized the stories and lyrical miniatures from the collected works "The incomplete carpet" ("Անավարտ գորգը") (1947), "Conscience" ("Խիղճը") (1955), "My spring under the snows" ("Գարունս ձյուների սակ") (1972), and the stories and lyrical miniatures from the series titled "Voices from the Khndzoresk canyon" ("Չայներ Խնձորեսկի ձորից"). All of the mentioned works transmit the longing for the search of humanity and a reader may get the feeling of obscure wanderings and hopeless expectations, problems of individual's alienation from society, anguish, drama, as well as matters of love, family and morals.

In the second chapter titled "World of novels" we have touched upon the novelette "People of Khoradzor" ("Խորաձորցիք") (1951) and the novels "People of the mountains" ("Լեռնցիներ") (1955), "Give me your hand, life" ("Տուր ձեռքդ, կյանք") (1959), "Good morning" ("Բարի առավոտ") (1964) and "Khndzoresk" ("Խնձորեսկ") (1982). We have paid particular attention to the last two stories, where the fates of people and the dramatic feelings of the heroes become more typical and apparent when they are set against the broad background of socio-political changes. In the novel "Good morning" ("Բարի առավոտ") the author describes the rural life during the first year after the war and the succeeding years of "snow break". We consider the mentioned novel to be of great value among other novels written on the same topic and we would like to emphasize that by means of using an indeed rich literary material, the author has succeeded in presenting the difficult life course and history of the generation that has fought in the war, as well as in revealing the vicious features of social life. We have analyzed the novel "Khndzoresk" ("Խնձորեսկ") as one of the most prominent works of the chronicle genre in latter-day literature and have made an attempt to evaluate it in relation to "Kyores" ("Կյորես") by Bakunts and the novelette "Daybook of occurrences" ("Մասյան եղելություն") by S.Khazadryan and reflect upon its structural and linguo-stylistic features.

The works by S.Ayvazyan presented in the given chapter possess a wide scope of time inclusions. This refers in particular to the transmission of soviet features to the uplands and the ensuing tragic events, unpredictable socio-political developments, hard feelings and extreme poverty within this context. All of these, as well as the ridiculous clashes of "ideas", fathers and sons, relatives and families confronting each other, civil strife, and characteristic scenes of the village during the years of the Patriotic war and the following post-war years are very typical of that transitional period.

The third chapter titled “Historical artistic prose” is devoted to the novels “The Armenian destiny” (“Ճակատագիրն հայոց”) (1967) and “At dawn” (“Առավոտ լուսն”) (1977), where S.Ayvazyan presents his ideas about “The Armenian route” (“Ճանապարհն հայոց”), tries to substantiate his notions and vision of the Armenian nation’s political orientation, as well as the invaluable significance of realizing the priority of national dignity in the struggle for survival by means of spiritual scrambles and the preservation of national traits and psychological characteristics.

After scrutinizing the given topic, we have come to the following conclusions:

The stories, novels, lyrical miniatures and novelettes by S.Ayvazyan are remarkable not only for the flamboyant descriptions of the scenery, the unusual characters of the people of the mountains, but also for their ideological issues.

The collected works of S.Ayvazyan include a range of series which all contain interconnected works that are close to one’s heart for the topics and mood reflected in them. This allows the author to emphasize the qualitative uniformity of the material found in each series. The stories found in “Voice of the canyons” (“Չորերի ձայնը”), “Meetings along the road” (“Հանդիպումներ ճանապարհին”), “My spring under the snows” (“Գարունս ձյուների տակ”), “In the oil world” (“Նավթաշխարհում”), “Voices from the Khndzoresk canyon” (“Չայներ Խնձորեսկի ձորից”), “Pantheon” (“Պանթեոն”) and other series reflect events that have occurred in various periods, the changes that have taken place in the life of the highlands and certain episodes from the lives of people with similar principles of perception and understanding of the world. And it is not erroneous to claim that, although not entirely, but still, this has helped the author in successfully overcoming the descriptiveness and narrativity of the stories from the previous decade and achieving new qualities of psychological storytelling.

S.Ayvazyan is more inclined to lyrical prose, which demands new approaches towards fighting the resistance of the material, as well as new means and forms of creating characters and scenes.

The author concentrated his attention on more broadscale issues. The boundaries of thematic inclusions were expanded, the issues of the individual and the society, the nature and the human being, the family, love, morality were elevated to new levels and were approached in a novel writing manner.

The historical novels by S.Ayvazyan are of significance from the perspective of enlightening the future course of the centuries, especially in connection to shedding light on the fact of politically orienting ourselves towards Russia. This issue was extremely important in the past and is of much more bigger importance nowadays given the current unpredictable geographical and political developments and this, in its turn, shows the actual importance of the mentioned novels.